

Հարություն Մարության (ՀՀ), պատմական գիտությունների
դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԿՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ XXI ԴԱՐՎԱՍԳՔԻՆ*

Վերջին տարիներին հայ ինքնության կորստյան վտանգի և պահպանման խնդրի ուղղությամբ մի շարք քննարկումներ եղան, մտավախություններ արտահայտվեցին: Ստորև փորձ է արվելու դուրս գալ զուտ ցանկությունների դաշտից և որոշակի մեխանիզմներ առաջարկել այդ հարցերում:

* * *

«Ազգային ինքնություն» հասկացությունը վերջին տասնամյակներից դարձել է ամենաշատ քննարկվող հարցերից մեկը: Այն սկսել է այնքան լայն ընկալվել ու մեկնաբանվել, որ որոշ հետազոտողներ անգամ առաջարկում են հրաժարվել այդ եզրույթի օգտագործումից²³: Սոցիալական գիտության մեջ այս հարցի շուրջ մեր օրերում առաջնությունը տրվում է ինքնագիտակցությանը՝ այն է՝ ինչպես է ինքն իրեն բնութագրում անձը: Այսինքն՝ ուրիշները չեն որոշում, թե ով իրավունք ունի ինքն իրեն, օրինակ, «հայ» կոչելու²⁴: Եթե, օրինակ, Հայաստանում ընտանիքն ու սոցիալական շրջապատն են պայմանավորում անձի ազգային ինքնությունը, ապա Սփյուռքի պարագայում որոշիչը, ի վերջո, դառնում է անհատի կողմնորոշումը: Եթե Հայաստանում «ո՞վ է հայը» հարցադրման գիտական ձևակերպումը հուզում է զլխավորապես գիտնականին կամ ծայրահեղ ազգայնականին, ապա Սփյուռքում այդ հարցը կարևորվում է բոլորի համար:

«Ո՞վ է հայը» հարցադրումը շատ խիստ, սկզբունքային դնելու պարագայում բերում է կորուստների (օր.՝ հայ-քաղկեդոնականների

* Հեղինակը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Լևոն Աբրահամյանին տեքստի պատրաստման ժամանակ տված արժեքավոր խորհուրդների համար:

²³ Մանրամասն տե՛ս. Rogers Brubaker and Frederick Cooper, “Beyond ‘Identity’”, *Theory and Society*, 29 (2000): 1-47.

²⁴ Հմմտ., օրինակ՝ Արմեն Այվազյան, Հայկական ինքնության գրավականները կամ ո՞վ է հայը.–Ազգ, 24.11.2007, նաև Հետք 29.01.2008 <http://hetq.am/arm/print/31813/>: Հարություն Մարության, Տրավմատիկ հիշողություն, իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն, Թուրքիայում. – Թուրքիայի հայության խնդիրների շուրջ: Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, 2008, թիվ 22, էջ 110-121:

վրացացումը²⁵ կամ հայ-կաթոլիկների (լեհացումը²⁶): Որոշ դեպքերում միայն մեկ իրադարձությունը հայկական ինքնությունից գրեթե ամբողջովին հեռացած անձանց մեջ կարող է հանգեցնել այդ ինքնության «թռիչքային» վերարթնացմանը, ինչպես եղավ, օրինակ, Ղարաբաղյան շարժման կամ Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Նման հնարավորություն ունեն նաև մուսուլման հայերը իրենց տատիկների հայկական ծագման մասին տեղեկանալիս²⁷: Այսինքն՝ ինքնությունը շատ ավելի ձկուն համակարգ է, քան նույնիսկ սոցիոլոգիական հարցումից ձևավորված պատկերը կարող է տալ:

Վերջին տասնամյակների սփյուռքյան իրողության բնութագրական գծերից է «միլլեթային»/«գետտոյական» կարգավիճակից անցումը անվանապես համայնքային կառույցների, որոնց մի զգալի մասում ազգային ինքնագիտակցությունն առավելապես անհատական, այլ ոչ թե համայնքային դրսևորում է:

Վերոնշյալ իրողություններից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Սփյուռքի ինքնության պահպանման հարցերում առաջին հերթին պետք է հենվել մտավորականների ներուժին: Ասվածը պետք է մեկնաբանել որպես միտում սփյուռքահայության լոկ վերնախավային շերտին առաջնություն տալու: Այս կերպ ոչ թե մերժվում է պատմական այն իրողությունը, որ համայնքներն են եղել այն միջավայրը, որտեղ ձևավորվել են ազգային մտավորականները, այլ փորձ է արվում հաշվի առնել մերօրյա իրավիճակը, երբ առանձին անհատների ձեռնարկումներն են դառնում որոշիչ համայնքային զարգացումներում: Ահա այս պարագայում է մեծապես կարևորվում հայության տվյալների հնարավորինս ամբողջական և որակյալ շտեմարանի ձևավորումն ու օգտագործման կերպը: Այս հարցում մեծապես օգտակար դեր կարող են խաղալ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող տարբեր ասպարեզների հայ մասնագետների պարբերական հավաքները: Տվյալների շտեմարանի հետևողականորեն «աշխատեցնելը» ի զորու է լուծելու հայության առջև կանգնած բազմաթիվ խնդիրներ, այդ թվում և ինքնության պահպանության հարցեր:

²⁵ Հարցի շուրջ տե՛ս, օրինակ՝ Н. Я. Марр, "Аркауи, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкидонитах". – В сб.: Византийский временник издаваемый при императорской Академии наук под редакциею В. Э. Регеля. Том XII, вып. 1-4, СПб, 1906: 1-68, В. А. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.). Е., 1980, Տիրան Մարության, Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Ե., 2003, էջ 238-246:

²⁶ Տե՛ս Բելլա Բարսեղյան, Լեհաստան. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 280-285:

²⁷ Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Ե., 2009:

Այստեղ կարող ենք առանձնացնել առնվազն երկու մոտեցում. առաջինը՝ արևմտյան առաջատար, նորարարական լոգիստիկայի (բիզնես մշակույթ, գիտակրթական ծրագրեր և այլն) ներդրում Հայաստանում, երկրորդը՝ տարբեր ձևաչափի (նույնիսկ շատ փոքր) հասարակական կազմակերպությունների միջոցով որոշակի ձեռնարկումների իրագործում Սփյուռքում:

Որքան էլ որ ինքնության ձևակերպումների հարցում կան տարակարծություններ իրենց դրսևորման հիմնական բնութագրիչների մեջ, այնուամենայնիվ, առանձնանում են լեզուն, կրոնը, կոլեկտիվ հիշողությունը, հասարակական կազմակերպությունները, և դրանց դրսևորման ոլորտները՝ դպրոց, եկեղեցի, թանգարան, ազգային-պետական, մշակութային ձեռնարկումներ և այլն:

Լեզու

Նախ նկատենք, որ լեզվի իմացության մակարդակը չէ, որ խիստ որոշիչ է հայկական ինքնություն կրելու պարագայում: Բանն այն է, որ ոչ «գետտոյական» սկզբունքով գոյատևող այլ սփյուռքների պատմական փորձը ցույց է տալիս, որ երրորդ-չորրորդ սերնդում մայրենի լեզվի իմացությունը արմատապես նվազում է, ամենաշատը կարող է գտնվել «կենցաղային» իմացության մակարդակում: Այնուամենայնիվ, այսօր ականատեսն ենք այն իրողության, որ հայերենը տարբեր հաճախականությամբ շարունակվում է օգտագործվել սփյուռքահայության տարբեր շերտերում: Սակայն դա չի նշանակում, թե հայերենի տիրապետման և կիրառման հարցում մերօրյա Սփյուռքում չեն սպասվում նման զարգացումներ:

Պետք է ընդունենք, որ (հատկապես Արևմուտքի Սփյուռքում) նեղացել և շարունակում են նեղանալ հայերենի գործածության ոլորտները, իսկ գործածվելու պարագայում գերիշխում է «կենցաղային, խոհանոցային» պատկերավոր ձևակերպմամբ՝ «պանիր-հացի հայերէն»-ը²⁸: Դրա պատճառների թվում են լեզվական շփումների սահմանափակումը կենցաղային մակարդակով, հասարակական վայրերում ելույթների ժամանակ գերապատվությունը տրվում է տվյալ երկրի պետական լեզվին, գիտական հայերենը գրեթե իսպառ բացակայում է, հայալեզու գիտական պարբերականներ չկան, մա-

²⁸ Անվանի սփյուռքագետ Խաչիկ Թոլոյանն օգտագործում է «erosion of language» ձևակերպումը: Տե՛ս Khachig Tololyan, “Armenian Diaspora”, in Encyclopedia of Diasporas. Immigrant and Refugee Cultures Around the World. Volume I: Overviews and Topics; Volume II: Diaspora Communities, editors: Melvin Ember, Carol R. Ember, Ian Skoggard (N.Y and London, 2005), 45. Տե՛ս նաև Շաւարշ Միսաքեան, Սարը սարի նման չէ, <http://go-url.ru/ij2-> Յակոբ Պալեան, Կը դադրի՞նք հայերէնի նահանջը մարդորսական արդարացումներէ ազատագրելու ճակումներէ, Հայ Կեանք. ազգային հասարակական մշակութային ելեկտրոնային պարբերական, Տարի Բ թիւ 1, 6 Յունուար 2017, էջ 11-12:

մուլի հայերենով գերազանցապես տեղեկատվական և հրապարակախոսական հոդվածներն են, համացանցային հայերենը չի փոխարինում գիտական պարբերականներին, իսկ համեմատաբար բարդ մտքեր արտահայտելու համար անցում է կատարվում մայրենի դարձած օտար լեզվին: Ուստի կարելի է եզրակացնել, որ շատ դեպքերում լեզվամտածողությունը հայերեն չէ, իսկ այն ազգային ինքնության բաղադրիչներից է: Կարելի է ասել, որ հայերենը սփյուռքյան վերնախավի (էլիտայի) լեզուն չէ²⁹:

Ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել հայերենի կարգավիճակը բարձրացնելու ուղղությամբ: Այս հարցում մեր մոտեցումները հենված են սոցիալական գիտություններում հայտնի այն դրույթին, որ առավել արդյունավետ են լինում այն ձեռնարկումները, որոնք գտնվում են ոչ թե կամավոր-պարտադիր տիրույթում (նույնիսկ եթե դրված են ազնիվ, հայրենասիրական մղումներով՝ ի մասնավորի լեզվի բնագավառում Գյուլբենկյան հիմնարկության վերջերս հռչակված ռազմավարության³⁰), այլ նրանք, որոնք շարժիչ ուժը պրեստիժայնությունն է: Այս մոտեցումն առաջին հերթին կրկին ուղղված է մտավորականությանը (ինտելեկտուալներին): Սփյուռքի վերնախավը խնդրի գիտակցման պարագայում (ինչը կարծես թե առավել ակնհայտ է երևում վերջին տարիներին զանազան հավաքներում և գիտաժողովներում բարձրացրած հարցերի քննարկումներում) կարող է գնալ հայերենի հեղինակության (պրեստիժայնության) բարձրացմանը՝ մասնավորապես հետևյալ բնույթի քայլերին դիմելով.

- հայտարարելով հայերենի տիրապետման պրեստիժայնությանն ուղղված նպատակադրության մասին, առնվազն առաջիկա տասը-քսան տարվա համար,
- հայերենի տիրապետման մակարդակի բարձրացմանն ուղղված մրցույթների կազմակերպումով ու հաղթողներին դրամական

²⁹ Հմմտ., օրինակ՝ Յակոբ Պալեան, Արեւմտահայերէնի պաշտպանութիւնը առաջին հերթին անոր գործածութիւնն է, Հայ Կեանք. ազգային հասարակական մշակութային ելեկտրոնային պարբերական, Տարի Ա թիւ 13, 23 Դեկտեմբեր 2016, էջ 9-10:

³⁰ Տե՛ս, օրինակ՝ «Արեւմտահայերէնը 21րդ դարուն» աշխատանոց/համաժողով, Օքսֆորտ 21-23 Յունուար 2016: Տեղեկագրութիւն եւ Առաջարկներ: Կազմակերպութեամբ Հրաչ Չիլինկիրեանի և Թէո վան Լինթի, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նիւթական աջակցութեամբ: Հոկտեմբեր, 2016: Տե՛ս նաև «Արեւմտահայերէնը 21րդ դարուն» Գիտաժողով՝ Օքսֆորտ Համալսարանին Մէջ<http://www.aztagdaily.com/archives/278852>, նաև<http://www.azg.am/AM/2016021216>: Հմմտ. Սիլվի Աբէլեան, Հարցազրոյց «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան հայկական բաժնի տնօրէն Դոկտ. Ռազմիլ Փանոսեանին հետ (12.12.2016), <http://go-url.ru/ii9z> : Հմմտ. նաև Յ. Պալեան, «Ճենոսայտ Եւ 100-Ամեակ» Յեղյեղել է Շուք, Կարգը Հասաւ «Արեւմտահայերէնի Պաշտպանութեան»<http://www.aztagdaily.com/archives/276144> :

կամ այլ պարզևերով խրախուսելու քաղաքականություն վարելով: Այդ թվում նաև՝ վճարելով հեղինակություն վայելող թանկ համալսարաններում ուսման վարձը կամ դրա զգալի մասը, կազմակերպելով անվճար կամ էական գեղչերով ուղևորություններ Հայաստանի Հանրապետություն կամ Արևմտյան Հայաստան, անընդհատ ուշադրության կենտրոնում պահելով այդ երիտասարդների գործունեությունը, ձեռքբերումները, պարբերաբար հարցազրույցներ վերցնելով և այլն,

- TOEFL-ին (Test of English as a Foreign Language) համարժեք համացանցային քննական ծրագիր ստեղծելով ու դրա հաջողությամբ հաղթահարումը առաջարկելով որպես միակ պայման վերը նշված արտոնությունների: Հայտնի է, որ TOEFL-ը ունի տարբեր աստիճաններ: Սփյուռքահայերի համար կարելի է համեմատաբար ավելի ցածր գնահատականները համարել ընդունելի:

- TOEFL-ին համարժեք համացանցային քննական ծրագիրը կարող է լինել արևմտահայերեն ու արևելահայերեն որոշ երկրների Սփյուռքի ու Հայաստանի համար: Երկուսն էլ բարձր գնահատականներով հանձնած երիտասարդներին տրամադրել մեծ արտոնություններ ուսման և աշխատանքի բնագավառում:

- TOEFL-ի հայերեն տարբերակն իր մեջ կարող է ներառել հարցեր ոչ միայն հայոց լեզվից ու գրականությունից, այլ նաև հայոց պատմությունից և աշխարհագրությունից:

- TOEFL-ի հանձնած-չհանձնած լինելը դարձնելով պարտադիր պայման գաղութային-համայնքային կյանքում, կուսակցական-քաղաքական ասպարեզում առաջընթաց ունենալու, համայնքի աջակցությունը ստանալու համար:

Այսինքն՝ հայերենին տիրապետող մարդկանց թվի բարձրացման, հայերենի վերստին կենդանի լեզու դառնալու առաջնահերթ պայմանը դրա տիրապետումը հեղինակավոր դարձնելն է:

Գրական մեկ լեզվի տարբերակները կամ ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, այնուամենայնիվ, տարբեր կարգավիճակներ ունեն և հետևաբար պահանջում են դրանց պահպանությանն ուղղված տարբեր ռազմավարություններ: Սփյուռքում երկուսն էլ վտանգված են յուրովի: Եթե այսօր արևմտահայերենի պարագայում դրան տիրապետողների թիվն է տարեցտարի քչանում (ինչի հաղթահարմանն ուղղված են Գյուլբենկյան հիմնարկության վերոնշյալ ձեռնարկումները), ապա արևելահայերենի կրողները այն շատ արագ դադարում են օգտագործել: Այս պարագայում էլ կամավոր-պարտադիր տարաբնույթ (մեկօրյա, ամենօրյա և այլն) հայկական դպրոցների թվի ավելացումը հազիվ թե բերի հարցի լուծման: Ահա ա՛յս հանգամանքով է պայմանավորված, որ հայերենի տիրապետման հեղինակության բարձրացման վերը նշված ձևը վերաբերի երկու լեզուներին էլ:

TOEFL-ի հիմամբ վերոբերյալ առաջարկը գերազանցապես ուղղված է երիտասարդներին, այսինքն՝ Սփյուռքի ապագա մտավորականներին: Այդ առումով ՀԲԸՄ-ի խողովակներով ֆինանսավորվող հայերենի առջանց ուսուցման ծրագիրը՝ «Հայկական առջանց համալսարանը», ուղղված է առավելապես միջին ու բարձր տարիքի մարդկանց: Համենայն դեպս, այդ մարդիկ են ծրագրի հիմնական շահառուները: Մինչդեռ ուսուցման մեթոդաբանությունը փոխելու ճանապարհով, երբ սովորողը համակարգչի էկրանին տեսնում է ուսուցչին, այլ ոչ թե միայն ինքն ու «մկնիկն» են գործող անձինք, կարելի է հասնել նրան, որ օնլայն ծրագրով հայերեն սովորեն նաև դպրոցահասակ երեխաները, որոնք չունեն հնարավորություն հաճախելու հայկական տարբեր ձևի դպրոցներ: Այսինքն՝ դասերը և հանձնարարությունները պետք է լինեն մոտավորապես այնպես ու այն ժամաքանակով ու հաճախականությամբ, ինչպես որ անեն օրյա դպրոցում է: Եվ կրկնենք՝ սովորողը համակարգչի էկրանին պետք է տեսնի ուսուցչին, որը, թերևս, սկզբնական շրջանում աշակերտի հետ կհաղորդակցվի նրա համար առավել հարազատ լեզվով՝ անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլն, ու ժամանակ անց միայն համապատասխան միջանկյալ քննությունը հանձնելուց հետո արդեն արևմտահայերենով կամ արևելահայերենով: Այս մոտեցումն օգտակար կարող է լինել նաև միջին և բարձր տարիքի հայերեն սովորել ցանկացողների համար:

Սփյուռքի հայագիտական կենտրոններին կարելի է առաջարկել հայագիտության այս կամ այն հարցին նվիրված գիտաժողովների լեզուն աստիճանաբար փոխել հայերենի: Միայն այդ կերպ կարելի է դաստիարակել հայերեն լեզվամտածողություն ունեցող նոր վերնախավ: Սկզբնական շրջանում նման գիտաժողովները կարող են ուղեկցվել անգլերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ հյուրերի և համայնքի օտարալեզու անդամների համար: Սրա ուղիղ հետևանքներից մեկը կարող է լինել այն, որ հայաստանյան և հայալեզու գիտական պարբերականների վարկանիշը բնականորեն կբարձրանա, իսկ դրա հետևանքը կլինի այն, որ այդ կերպ կբավարարվի ՀՀ ԲՈՀ-ի որոշումների այն հատվածը, համաձայն որի պահանջվում է ատենախոսության պաշտպանության համար պարտադիր հրապարակումներ ունենալ բարձր գիտական վարկանիշ ունեցող պարբերականներում (որոնք ներկայումս գերազանցապես անգլալեզու են):

ԵԿԵՂԵՑԻ

Ավանդաբար Սփյուռքի հայկական համայնքներում ինքնուրույն պահպանության խնդիրներին անդրադառնալիս Եկեղեցին պարտադիր նշվում է, երբեմն և Եկեղեցին լեզվից առաջ է նշվում, քանի որ եկեղեցական արարողությունները կարող են և արվում են այլ լեզուներով նույնպես: Եվ այդ պատահական չէ, հաշվի առնելով այն հան-

գամանքը, որ Եկեղեցին հաճախ երկար ժամանակ, անգամ դարեր շարունակ իր վրա է կրել ոչ միայն հոգևոր, այլև պետությանը հատուկ աշխարհիկ գործառույթներ³¹: Ներկայում, երբ Հայաստանն արդեն քառորդ դար է, ինչ անկախ պետություն է, Եկեղեցու դերը հանրապետությունում հայկական ինքնության պահպանման գործում օբյեկտիվորեն տեղափոխվում է խորհրդանշական դաշտ, ինչը երբեմն խանդով է ընկալվում Եկեղեցու կողմից և դրսևորվում է նրա՝ ազգայինը կրոնականով փոխարինելուն ուղղված ձեռնարկումներում՝ դասագրքեր, Եկեղեցաշինություն³², գաղափարախոսություն և այլն: Միևնույն ժամանակ Եկեղեցու կողմից իրականացվող որոշ այլ ձեռնարկումներ (օրինակ՝ Տյառնընդառաջին նորապսակների օրհնության կարգի կատարումը, «օտար» Վալենտինի օրվա փոխարինումը «ազգային» Տրնդեզով³³, սբ. Սարգսի³⁴ և վերջերս էլ Բարեկենդանի նշումը) նպաստում են ազգային ինքնության ժողովրդական հանգուցային կերպարների և օրերի թարմացմանն ու ամրապնդմանը:

Սփյուռքի պարագայում Եկեղեցին այսօր իր կրոնական գործառույթներն ավանդաբար ավելի շատ պահպանում է ավագ սերնդի ներկայացուցիչների համար, մինչդեռ երիտասարդների համար այն հաճախ ընդամենը խորհրդանշային ոլորտում է և ինքնության մեկ տարրը միայն կարող է լինել: Այսինքն՝ ապագայում Եկեղեցու դերը ինքնության պահպանման մեջ հավանաբար ավելի արտահայտված կլինի իր աշխարհիկ-ազգային, այլ ոչ թե կրոնական երանգներով, ինչը կարելի է որդեգրել որպես ռազմավարական ուղղություններից մեկը: Սա համեմատելի է այն իրողության հետ, որ Վենետիկի Սխի-

³¹ Հարցի շուրջ տե՛ս, օրինակ՝ Khachig Tölölyan, “The Role of the Armenian Apostolic Church in the Diaspora”, *Armenian Review*, 41:1 (Spring 1988): 55-58, 68, Levon Abrahamian, *Armenian Identity in a Changing World*. Costa Mesa, CA: Mazda Publishers, 2006, ch. 6 (“The Path of Faith”): 111-134.

³² 2000-2015 թթ., այսինքն՝ «Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալության 15 տարիների ընթացքում վերանորոգված կամ կառուցված վանքերի, եկեղեցիների ու մատուռների ընդհանուր թիվն անցել է 250-ից: ...1991-ից հետո Արցախի թեմում կառուցվել է 12 նոր եկեղեցի»: Մարինե Մարտիրոսյան, Վահե Սարուխանյան, Անկախությունց ի վեր Արցախում 12 եկեղեցի է կառուցվել, 4-ի շինարարությունն էլ ընթացքում է, 2 դեկտեմբերի 2015 թ., <http://hetq.am/arm/news/64015/ankakhutyunic-i-ver-arcakhum-12-ekexeci-e-karucvel-4-i-shinararutyunn-el-yntacqum-e.html>

³³ Հարցի շուրջ Տե՛ս, օրինակ՝ Տյառնընդառաջի տոնը՝ նորապսակների օրհնության օր

<http://www.armenianchurch.org/index.jsp?sid=3&nid=2314&y=2013&m=1&d=13>:

Հասմիկ Թամամյան, Աստծուն ընդառաջ: Տյառնընդառաջ կամ Տրնդեզ. ժողովրդական ավանդույթի ջերմությունը, <http://holytrinity.am/posts/view/836>

³⁴ Երիտասարդների և սիրո բարեխոս Սուրբ Սարգիս գորավարի հիշատակության օր, <http://www.qahana.am/am/holidays/2017-02-11/1>:

թարյան միաբանության հայրերի թողած ժառանգությունից հայկական ազգային ինքնության համար այսօր կարևորվում են միայն հայագիտական, այլ ոչ թե կաթոլիկ-աստվածաբանական գործերը:

«ՄԵԿ ԱԶԳ -ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ»

Վերջին երկու տասնամյակներում «մեկ ազգ - մեկ մշակույթ» կարգախոսը լայն տարածում է գտել և հավակնում է դառնալ հայ ինքնության բաղադրիչներից մեկը: Եթե ազգասիրական հռետորաբանության մեջ այն կարող է և տեղին թվալ, ապա գիտական, ազգաբանական տեսանկյունից նման կարգախոսը բնորոշ է միայն ամբողջատիրական հասարակություններին: Իսկ եթե այս կարգախոսը բովանդակային առումով կիրառություն գտնի որպես ինքնության պահպանմանն ուղղված ռազմավարություն, ապա այն կարող է բերել հայկական մշակույթի բազմազան դրսևորումների արագ վերացմանը, մինչդեռ հենց բազմազանությունն է, որ ցանկացած մշակույթի հարստությունն է: Գիտության այսօրվա խոսքին համապատասխանող կարգախոսը կարող է լինել «մեկ ազգ – բազմաթիվ մշակույթներ»³⁵: Այսինքն ռազմավարությունը պետք է ուղղված լինի առկա բազմազանության պահպանմանը և խրախուսմանը:

Ընդ որում, հիշյալ կարգախոսի «ազգ» բաղադրիչը արդեն սովորական «ազգ» չի նշանակում, հատկապես հայերի պարագայում, որոնք տիպիկ «տրանսազգի»³⁶ օրինակ են, քանի որ հայերն ապրում են ոչ միայն իրենց պետության սահմաններում, այլև գերակշիռ մասը՝ ազգային պետության սահմաններից դուրս³⁷:

Կարելի է ավելացնել, որ տրանսազգի ներսում նկատվում են նոր միտումներ՝ ուղղված ենթաազգերի ձևավորմանը: Այսպես՝ հայկական ինքնությունը հայաշատ համայնքներում վաղուց արդեն էթնիկ ոլորտից տեղափոխվել է ազգային/national, ավելի շատ ենթաազգային ոլորտ, որի դրսևորումներից մեկն էլ այն է, որ, օրինակ, ամերիկաբնակ հայերն իրենց համարում են ամերիկացի, ֆրանսաբնակները՝ ֆրանսիացի և այլն: Այսինքն՝ ինքնության ոլորտում առաջին պլան է գալիս քաղաքացիական ազգության նշումը: Դա, թերևս, օրինաչափ գործընթաց է և դրանից պետք չէ ողբերգություն

³⁵ Левон Абрамян, “Армения и диаспора: расхождение и встреча”, Диаспоры 3 (2005): 189, Levon Abrahamian, Armenian Identity in a Changing World, 340-341.

³⁶ Խնդրի շուրջ մանրամասն Տե՛ս, օրինակ՝ А. С. Ким, “Транснациональность диаспор: междисциплинарный анализ”, Пространственная экономика 1 (2006): 99-108.

³⁷ Հարցը լավագույնս քննարկված է հետևյալ աշխատանքում՝ Khachig Tölölyan, “Elites and Institutions in the Armenian Transnation”, Diaspora 9: 1 (Spring 2000): 107-136.

սարքել: Այսօր կարելի է ասել, որ ձևավորվել է, օրինակ, «ամերիկահայ ազգություն», որը, սակայն բազմաշերտ է³⁸:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքահայ ինքնության դրսևորման հիմնական միջոցը շարունակում է մնալ ցեղասպանության հիշողությունը և յուրօրինակ պայքարը ժխտողականության դեմ՝ ի դեմս ապրիլքսանչորսյան ու դրանից արտածվող միջոցառումների: Սա նույնպես օրինաչափ գործընթաց է: Եթե նախկինում նման միջոցառումներն առավելապես գետտոյական, այսինքն՝ զուտ հայկական ընդգրկում ունեցող բնույթ ունեին, ապա վերջին տասնամյակներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, դրանց մեջ ներգրավվում են ամերիկյան քաղաքական համակարգի (իսթեբլիշմենթի) տարամակարդակ ներկայացուցիչներ: Բայց և այնպես, ամերիկյան ժողովուրդը, նաև նրա մշակութային վերնախավի ճնշող մեծամասնությունը անհաղորդ է հայկական պահանջներին: Պատճառը մեկն է՝ Հայոց ցեղասպանության հիշողությունը չի դարձել ամերիկյան ժողովրդի կոլեկտիվ հիշողության, կոլեկտիվ ինքնության, վերջապես՝ պաշտոնական օրացույցի մաս: Այնպես, ինչպես, օրինակ, Հոլոքոստի հիշողությունն է³⁹:

Պատճառներից մեկն այն է, որ ամերիկյան հայկական լոբբին իր գործունեությունը ծավալում է գերազանցապես ամերիկյան քաղաքական գործիչների շրջանում՝ ակնկալելով նրանցից քաղաքական աջակցություն, քաղաքական որոշումներ: Ամերիկյան ժողովրդի մեջ այն ընկալվում է առավելապես որպես երկու հակամարտող էթնիկ հանրույթների՝ հայերի և թուրքերի խնդիրների դրսևորում: Մինչդեռ Հոլոքոստի պարագայում առնվազն երեք-չորս տասնամյակ է, ինչ խնդիրը ներկայացվում և ընկալվում է *գաղափարախոսական* հարթության մեջ, այսինքն՝ գերմանացի էթնիկ միավորից անցում է կատարված մարդատյաց գաղափարախոսության՝ նացիզմի և ռասիստական գաղափարներով առաջնորդվող պետական ապարատի գործունեության արդյունքի ոլորտ⁴⁰:

Ցեղասպանության իրողության և մատուցման՝ հայոց կողմից առավելապես էթնիկ բնույթի ընկալումը և ներկայացումը իրենց յուր-

³⁸ Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը. – «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում». Գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 42-54:

³⁹ Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, Պատմաբանասիրական հանդես, 2011, թիվ 2, էջ 24-46:

⁴⁰ Տե՛ս, օրինակ՝ Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Ե., 2009, էջ 65-66:

օրինակ դրսևորումն են ստանում նաև Ցեղասպանության զոհերին նվիրված խաչքարային-հուշարձանային գործունեության մեջ: Մինչդեռ հրեից պարագայում գործում են տասնյակ թանգարաններ: Եթե հուշարձանը, խաչքարը առավելապես ուղղված են գաղութին-համայնքին, որը տարին մեկ-երկու անգամ դրա շուրջը կրոնական արարողություններով համեմված հիշատակի միջոցառումներ է իրականացնում, ապա տարին առնվազն 300 օր գործող թանգարանն ի զորու է ծանոթացնել հայոց մշակույթին և պատմության ելևէջներին տասնյակ հազարավոր հայ և օտարազգի այցելուների՝ այդ կերպ ճանապարհի հարթելով դեպի հայկական իրողությունները տվյալ երկրի բնակչության համար ավելի ճանաչելի լինելու ու ժամանակ անց նաև ինքնության մաս դառնալու: Բնութագրական է, որ 2015-ի շեմին այս հանգամանքի գիտակցումը տեղ գտավ և ձեռնարկվեցին որոշ, դեռևս ոչ այնքան բավարար քայլեր: Ընդ որում, թանգարանները պետք է ունենան ոչ միայն ցուցադրություններ, այլ նաև գիտահետազոտական մասեր, ինչը միայն հնարավորություն կտա ժխտողականության դեմ պայքարը դարձնելու արդյունավետ: Թանգարանները միջազգային չափանիշներով կառուցելու և աշխատացնելու պարագայում ի զորու են դառնալու այն միավորները, որոնք իրենց շուրջը կհամախմբեն տվյալ երկրի հայկական համայնքի ոչ միայն ավանդաբար ակտիվ հատվածին, այլ նաև չկուսակցականացված ու եկեղեցուց հեռու մնացող հայկական շրջանակներին⁴¹:

Հայոց ցեղասպանության հիշողության մեջ հասունացել է ևս մեկ որակական անցում: Շուրջ մեկ դար շարունակ հայերը նշում են «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը»: Մինչդեռ Ցեղասպանության տարիներին եղել են նաև այլ իրողություններ. հայ բնակչությունը 10-12 խոշոր բնակավայրերում, նաև գավառներում մղել է ինքնապաշտպանական անհավասար մարտեր թշնամու դեմ: Ճիշտ է, դրանցից միայն մեկը՝ Վանի ինքնապաշտպանությունն է ավարտվել հաղթանակով, սակայն նշված կռիվները, ինչպես նաև հազարավոր այլ դրվագներում հայ մարդկանց դիմադրությունները ցույց են տվել,

⁴¹ Հարցի քննարկումը տե՛ս Հարություն Մարության, Ցեղասպանության հիշողությունն իբրև գործոն. արդի վիճակը և հնարավոր զարգացումները. Ինքնությունը և փոփոխվող աշխարհը. միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2008, էջ 96-105: Նույնի, Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն). – Պատմաբանասիրական հանդես, 2014, թիվ 3, էջ 58-79: Harutyun Marutan, “Museums and Monuments: Comparative Analysis of Armenian and Jewish Experiences in Memory Policies”, *Études Arméniennes Contemporaines* 3: Juifs, Arméniens: un siècle d’État (Juin 2014): 57-79: Арутюн Марутян, Памятник или музей? Политика памяти на родине и в диаспоре (на примере армянского и еврейского опыта). – *Диаспоры: независимый научный журнал*, 2015, N 1-2, с. 8-30.

որ շատ հաճախ հայերը չեն զոհվել առանց իրենց ու իրենց հարազատների կյանքի ու արժանապատվության փրկությանն ուղղված պայքարի: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ևս հայերը ցույց տվեցին, որ իրենք լավ կռվողներ են: Նույնը դրսևորվեց արցախյան ազատամարտի տարիներին: Մինչդեռ շուրջ մեկ դար մենք ինքներս մեզ և աշխարհին ներկայանում ենք որպես զոհեր: Սա բերում է նաև հոգեբանական բարդությունների, մանավանդ ոչ քիչ թվով հայ երիտասարդների մեջ, որոնք չեն ցանկանում իրենց զգալ որպես զոհերի ժառանգներ: Վիճակը կարող է նշանակալի չափով շտկել շեշտադրումների փոփոխությունը, ի մասնավորի, ապրիլի 24-ի պաշտոնական հայտարարումը որպես «Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական մարտերի հերոսների հիշատակի օր», այս կերպ ինստիտուցիոնալացնելով պայքարի, մարտնչելու գաղափարը, ինչը հայոց հիշողության մշակույթի և, որպես հետևանք, հայոց ինքնության մեջ ժամանակ անց կբերի գոնե որոշակի հավասարակշռություն⁴²:

ՍՓՅՈՒՌՔ - ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ -ՍՓՅՈՒՌՔ

Վերոբերյալ տրանսագգի գաղափարը առաջին հայացքից տպավորություն է ստեղծում, որ Հայրենիքի դերը առաջնային չէ նման վիրտուալ կառույցում: Մինչդեռ էթնիկ փոքրամասնությունից Սփյուռք դառնալու համար պարտադիր ենթադրվում է Հայրենիքի առկայություն իրական կամ խորհրդանշական:⁴³ Այս առումով բնութագրական են Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան դեկլարների ելույթներում հնչեցված մոտեցումները: Այսպես՝ ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1997 թ. սեպտեմբերի 26-ի մամուլի ասուլիսում հայտարարեց. «Առիթ ունեցել եմ ասելու, որ, այո՞, մենք Սփյուռքի հետ երկխոսության դժվարություն ունենք, որովհետև Սփյուռքը չունի միասնական ներկայացուցչական մարմին: Սփյուռքի համար մեզ հետ հարաբերվելը շատ հեշտ է. կա մեկ պետություն, մեկ իշխանություն: Իսկ մեզ համար նրանց հետ հարաբերվելը չափազանց բարդ խնդիր է: Պարզապես Սփյուռքը դեռևս չի կարողացել դուրս գալ ավանդական ազգային կառույցների մտապատկերից եւ մտածել վերսփյուռքյան կամ համասփյուռքյան միասնական կառույցի ստեղծման մասին: Մինչեւ սա չլինի, դժբախտաբար, այս

⁴² Հարություն Մարության, Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակման օր. – Մարդ և հասարակություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2015, թիվ 1, էջ 8-12: Յարութին Մարութեան, Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանութեան զոհերի եւ ինքնապաշտպանական մարտերի հերոսների յիշատակի օր. Ազգակ, 2015, 24 ապրիլի բացառիկ, էջ 8-11:

⁴³ Հարցի հանգամանալի դիտարկումը Տե՛ս William Safran, “Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return”, *Diaspora* 1: 1(1991): 83-99.

թյուրըմբռնումները շարունակվելու են, եւ մեր համագործակցության անարդյունավետությունը լինելու է»:⁴⁴ Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովում (1999 թ. սեպտեմբերի 22-23) ՀՀ Վարչապետ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ երբ Հայաստանում ներդրումներ կատարող սփյուռքահայ գործարարները հանդիպեն որևէ դժվարության, ապա կարող են անձամբ իրեն դիմել: Այս երկու մոտեցումներն էլ գործող մոդելներ չեն: Առաջինը, որ Սփյուռքը ներկայացնող մեկ կառույց թե՛ տեսական, թե՛ գործնական առումով չի կարող լինել (հմտ. «Մեկ ազգ - մեկ մշակույթ» կարգախոսի քննարկումը). Սփյուռքը բազմաշերտ է, բազմադեմ և բազմակարծիք: Ահա այս առումով է, որ Սփյուռք-Հայրենիք և Հայրենիք-Սփյուռք կապերում նշանակալի դեր կարող են խաղալ տարաբնույթ կազմակերպությունները՝ խոշոր կուսակցություններից և գաղութ-համայնքներից մինչև մասնագիտական և այլ տեսակի հասարակական, միջին և փոքր կառույցներ, որոնք կազմում են քաղաքացիական հասարակությունը:⁴⁵ Երկրորդ մոտեցումը ընդհանրապես չի ենթադրում որևէ ինստիտուցիոնալ գործող կառույց: Նման համակարգում անելու համար, ռազմավարական առումով, անհրաժեշտ է Հայրենիքում որոշակի կառույցի առկայություն: Այդպիսի գործառույթներ իրականացնելու ներուժ ունի Սփյուռքի նախարարությունը:

Սփյուռքահայ գործարարներին Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ անելուն խանգարող գործոններից է վստահության պակասը հայաստանյան գործարար միջավայրի, նաև պետական օղակների, հարկային օրենսդրության, պաշտոնյաների կոռումպացված և շուկայի մենաշնորհված լինելու վերաբերյալ: Վստահության ձեռքբերման միջոցներից կարող է լինել ներդրողների ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծումը, նրանց մեծ արտոնությունների տրամադրումը:⁴⁶

Մեր համոզմամբ տրանսազգ լինելու (այսինքն՝ սահմանների գոյությամբ պայմանավորված չլինելու) համար պարտադիր պայմաններից է առնվազն անցյալում ազգի առկայությունը որոշակի պետական սահմաններում: Այստեղից արդեն երևում է, որ Սփյուռք-Հայրենիք և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները միայն հորիզո-

⁴⁴ <http://qoo.by/2guH>

⁴⁵ Հարցի շուրջ Տե՛ս, օրինակ՝ Khachig Tölölyan, “Elites and Institutions in the Armenian Transnation”, 109, 120-121:

⁴⁶ Հարցի շուրջ տե՛ս Harutyun Marutyan, “Armenia-Diaspora Relations from the Perspective of Social Transformation: Reciprocal Perceptions in Armenia and Diaspora”, Presentation on the Third Congress Armenia-Diaspora. Yerevan, 2006. https://www.academia.edu/8221550/Harutyun_Marutyan-Armenia-Diaspora_Relations_from_the_Perspective_of_Social_Transformation-Engl-2006-presentation

նական հարթության վրա չեն, այլ նաև «ուղղահայաց» կենտրոնաձիգ: Այլ կերպ ասած, վերը նկատված բազմակենտրոնությունը, այնուամենայնիվ, ենթադրում է հատուկ մի կենտրոնի՝ Հայաստան-հայրենիքի արևայությունը, քանի դեռ աշխարհում կան պետական կազմավորումներ:

Վերը ասվածը չի նշանակում Սփյուռք-Հայրենիք և Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նոր աստիճանակարգության (հիերարխիա) ստեղծում և կամ Սփյուռքի ներսում խոշոր համայնքային կազմավորումների ձևավորում: Ավելի շատ խոսքը ցանցի ներսում գործունեությունը համակարգելու, հավասարը համարժեքի հետ արդյունավետ համագործակցելու մասին է:

Арутюн Марутян (РА), *Проблемы сохранения армянской идентичности в общинах диаспоры в начале XXI века.* В последние годы имели место несколько дискуссий по вопросам опасности утраты и сохранения армянской идентичности, была высказана определенная озабоченность. В статье сделана попытка выйти из круга одних лишь пожеланий и предложить определенные механизмы для решения этих проблем. В частности, рассматриваются вопросы проявления идентичности в сфере языка, религии, культуры, коллективной памяти Геноцида армян, о систематизации деятельности в сети Диаспора-Армения и Армения-Диаспора, о путях плодотворного сотрудничества равноценных партнеров.

Harutyun Marutyan (RA), *Problems of Armenian Identity Preservation in the Diaspora Communities at the Beginning of XXI Century.* During the last years there have been several discussions on the issues of danger of loss and preservation of Armenian identity, certain concerns were expressed. In the article an attempt is done to get out from the range of wishes only and to propose definite mechanisms for the solution of this problems. In particular, the issues of manifestations of identity in the sphere of language, religion, culture, collective memory of Armenian Genocide are discussed, as well as the ways of systemization of activities in the network of Diaspora-Armenia and the ways of productive cooperation of equal partners.